# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.11.2018թ.

## Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**

**թիվ ՍՑ-ԱՄ-2018/159**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի հայցի ապահովում կիրառելու մասին 12.11.2018թ. թիվ ԵԴ/25428/02/18 որոշումը, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի պահանջով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

ՀՀ ֆինանսների նախարարության 25.10.2018թ. թիվ 01.1/26-3/19322-18 գրությամբ «Էլմարկետ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00112776) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2018/159 ընթացակարգը կասեցնել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ